ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄՇՁԲ-20-7/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30 -ը մարտի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Կապանի հաց» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ. Աթաջանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 28.02.2020թ. կնքված № ԲՄՇՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **6 800 000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը. ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՁՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կապանի հաց» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Կապան, Ա. Մանուկյան 9.
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Արդշինբանկ» ՓԲԸ, Կապանի մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 2470801407800000
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 09412411
ՀՎՀՀ 02522157	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ռ. ԱԹԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԾՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակի և եռամսյակների 2020թ.		
						1-ին կիսամյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2020թ.
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Կապանի տարածաշրջան)	կգ	40000	170	6800000	20000	10000	10000

Հավելված N 2
№ ԲՄԾՁԲ-20-7/2-1 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	*Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2020թ.									
		մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Կապանի տարածաշրջան)	3400000	3400000	3400000	3400000	5100000	5100000	5100000	6800000	6800000	6800000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/552

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կապանի հաց» ՍՊԸ տնօրեն

Մ. ԱԹԱՋԱՆՅԱՆ

Հաշ. Գ. Հ/հ
ակ. AN 0616186